չարի, որ կարի տկարացուցանէ զկեանս մեր մինչև 'ի մահ, որպէս ինքն արարիչն մեր ասաց՝ եթէ ուտիցես մահու մեռանիցես, որպէս նա միայն արարիչ Աստուածն մեր, ուրեմն նա միայն կարող է հրամայել 'ի վերայ զօրութեան հոգւոյ և մարմնոյ մերոյ, բայց 'ի նմանէ այլ ոչ ոք և մեք ոչ ումեք պարտիմք խոնարհիլ, բայց նմայ և ոչ միայն մեք, նաև երկնային և երկրային զօրութիւնք պարտին հնազանդիլ միայնոյ նմայ, և 'ի վերայ այսմ օրինիս շնորհեցաւ Օրհնութիւն 'ի վերայ Ադամայ նախահօրն մերոյ և ամենայն արարածոց 'ի վերայ երկրի՝ այսինքն աճիլ և բազմանալ և լցել երկիր։ Մի լինիցի ինձ հարկաւոր ասել ձեզ բան 'ի Աստուածաշունչ գրոյ, քանզի ոչ է իմ կամք Քարոզ կարդալ վասն ձեր, և ոչ դուք ունիք հարկաւորութիւն յինէն լսելոյ վարդապետութիւն։

Այլ որպէս հաւատացեալ եմք՝ որ եթէ բնութիւն մարդոյ ոչ մեղանչէր և ոչ անցանէր պատուիրանաւն Տեառն, ոչ իջանէր նախնին մեր Ադամ 'ի ծայրագոյն պատուոյն և ոչ արտաքսէր 'ի դրախտէն փափկութեան, և ոչ ելանէր հրաման Տեառն 'ի վերայ երկրի վասն բանալոյ սահանքս ջրոյ և ջնջելոյ մարդս 'ի վերայ երկրի, և ոչ ոք մարդ մահու մեռանիցէր. ահա առաջին վճիռ 'ի բերանոյ Տեառնէ 'ի վերայ բնութեան մերոյ, որ ասաց՝ եթէ անցանես միով Պատուի-